community

The New Apostolic Church around the world

03/2024/AM

Ժամերգությունների գնալ

Խմբագրական
Ինչու՞ ենք գնում ժամերգությունների

Ժամերգություն
Յուրաքանչյուր ոք ապրելու է ազատությունը

Վարդապետական ուսմունք
Ճշմարիտ հավատն ապագա ունի

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ինչու՞ ենք մենք գնում ժամերգությունների

Ժամերգություն

4 Յուրաքանչյուր ոք ապրելու է ազատությունը

Ճշմարիտ հավատն ապագա ունի

10 Առաքյալ Ռենե Ֆոլլմաննի այցը Հայաստան

Մանկական անկյուն

12 Մեսիան և խաղաղության նրա թագավորությունը

14 Այցելություն Լուորինային՝ Աբու Ռոադում/ դկաստան/

Տեսություն

16 Ճշմարիտ հավատն ապագա ունի

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Ռուանդայի ՆԱԵ
Շապիկի ետևի կողմի լուսանկարը՝ Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասի ՆԱԵ

Ինչու ենք մենք գնում ժամերգությունների

Լուսանկարը՝ Միջազգային Նորաստեղծական ընկերության

Ամեն անգամ, երբ մենք հավաքվում ենք ժամերգության, արտահայտում ենք Քրիստոսին մոտ լինելու մեր ցանկությունն ու մեր կայացրած որոշումը:

Շաբաթվա ընթացքում մենք բոլորս տարբեր բաներ ենք ապրում, սակայն, կիրակի օրը հավաքվում ենք ժամերգության, որպեսզի խոստովանենք՝ ,, Ես ցանկանում եմ Հիսուսին մոտ լինել,,:

Եվ դա մենք ասում ենք ինքներս մեզ, ասում ենք հարևանին, ասում ենք սատանային: Մենք վկայում և խոստովանում ենք մեր կամքը, որ մենք պատկանում ենք Քրիստոսին և ուզում ենք մեր կյանքը ձևավորել նրա օրինակով: Շաբաթվա ընթացքում կարող են շատ երևույթներ տեղի ունենալ, իսկ սատանան ուզում է դրանք օգտագործել՝ մեզ Աստծուց հեռացնելու համար: Բայց, հետո մենք գալիս ենք ժամերգության, որպեսզի հստակ ասենք՝ ,, Ոչ, մենք միշտ փնտրում ենք այդ մոտիկությունը: Դուք կարող եք անել այն, ինչ ուզում եք: Դուք մեզ չեք կարող երկպառակտել: Մենք ուզում ենք Քրիստոսի հետ միասին լինել և նրա հետ միասին Աստծո արքայություն գնալ,,:

Եվ ամեն անգամ, երբ Աստված տեսնում է այս ցանկությունն ու վճռականությունը, որ մենք փնտրում ենք այդ մոտիկությունը, որ ուզում ենք Քրիստոսի հետ միասնություն կազմել, նա երաշխավորում է մեզ առանձնահատուկ օրհնանք, նա երաշխավորում է մեզ իր խաղաղությունը և իր զորությունը:

Սրտագին ողջույններով՝

Ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

Յուրաքանչյուր ոք ապրելու է ազատությունը

Սրտանց ողջույններ Թամայում / Ճապոնիա/, որտեղ գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը 2023-ի օգոստոսի 11-ին տոնեց ժամերգություն

Լուսանկարները՝ Թարգո օլիվիանոսի արևմտյան մասի ՆԱԵ

Հովհաննես 10,9

,, Ես եմ դուռը, եթե մեկը իմ միջով մտնի, կփրկվի, կմտնի ու կելնի և ճաշակելու բան կգտնի,,:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք իսկապես շատ շնորհակալ ենք մեր երկնային Հորը, որ նա մեզ համար հնարավոր դարձրեց այսօր առավոտյան այստեղ միասին հավաքվելը: Ես երջանիկ եմ այս ժամերգությունը ձեզ հետ ապրելու համար: Ես ցանկանում եմ առիթն օգտագործել արտահայտելու իմ խորին ակնածանքն ու խորին շնորհակալությունը ձեր հավատարմության և աշխատանքի համար, այն աշխատանքի համար, որ անշեղ կատարել եք ձեր սեփական փրկության համար և եկեղեցում ձեր ծառայության համար: Իսկապես, դուք արտակարգ աշխատանք եք կատարում որպես աշակերտներ, որպես Տիրոջ ծառաներ, և ես բացարձակ համոզված եմ, որ Տերն այդ աշխատանքը, որ դուք ձեր փրկության և եկեղեցու համար եք կատարել, լիակատար ավարտին է հասցնելու: Հիսուսն

ավարտելու է այն գործը, որը նա սկսել է ձեզնով և ձեր համայնքներում:

Աստվածաշնչյան մեր խոսքը վերցրված է Սուրբ գրքի ծանոթ հատվածից: Այստեղ Հիսուսն իրեն ներկայացնում է որպես բարի հովիվ: Սակայն, նա նաև ասում է՝,, Ես դուռն եմ,,: Սա մի քիչ բարդ է, քանի որ երկու պատկերները խառնված են իրար: Մի կողմից նա ասում է, որ նա հոտի հովիվն է, իսկ մյուս կողմից՝ նա փարախի դուռն է: Որպեսզի սա ավելի պարզեցնենք, անդրադառնանք միայն դռանը, այլ ոչ թե՝ հովվին: Այստեղ Հիսուսն ասում է, նա փրկության, երանելիության դուռն է: Սա կարևոր խոսքն է Հիսուսի և հիմքն է մեր քրիստոնեական հավատի: Որպեսզի երանելի դառնան, այսինքն՝ հասնեն Աստծո արքայություն և Աստծո հետ հավիտենական միասնություն կազմեն, կա միայն մեկ հնարավորություն՝ դա հավատն է առ Հիսուս Քրիստոս: Պետք է հավատալ, որ նա Աստծո Որդին է, ով երկիր է եկել: Պետք է հավատալ նրա զոհաբերությանը, և, որ առանց նրա զոհաբերության չեն կարող երանելի դառնալ: Պետք է հավատալ նա վարդապետությանը, Ավետարանին: Դա նշանակում է, որ բավարար չէ միայն ասելը՝,, Սա է ճշմարտությունը,,: Պետք է կյանքը նրա Ավետարանի համաձայն ձևավորել և հավատալ, որ Տերը ետ է գալու, որպեսզի մեզ իր հետ տանի: Առանց նրա չեն կարող հասնել Աստծո արքայություն: Միայն նա կարող է Աստծո հետ միասնություն ունենալ, ով հավատում է և դառնում է Հիսուս Քրիստոսի հետևորդը: Հիսուսն է այդ դուռը-ուրիշ այլ դուռ չկա:

Ապա նա ասում է, որ նա, ով հավատում է իրեն, կմտնի և կելնի: Այս պատկերը նկարագրում է քրիստոնյաների ազատությունը: Հիսուսի Քրիստոսին հավատալու, սուրբ ջրով մկրտվելու և Սուրբ Հոգով կնքվելու միջոցով հավատացյալն ազատվում է մեղքի տիրապետությունից: Հիսուս Քրիստոսի միջոցով նա հասնում է ազատության: Իսկ դա տեսություն չէ: Սա շատ կարևոր և նշանակալից է մեզ համար, քանի որ Հիսուսն ասում էր հավատացյալին՝,, Ահա քո առաջ դրի բաց դուռը, որը ոչ ոք չի կարող փակել,, / Հայտնություն 3, 8/: Ով մկրտված է ջրով և կնքված է Հոգով, կարող է գնալ Աստծո թագավորություն, և ոչ ոք չի կարող մեզ դրանում խանգարել: Ոչ մի մարդ, ոչ մի ուժ, ոչ մի ոգի չի կարող այդ դուռը փակել: Դա նշանակում է նաև, որ մեր փրկությունը կախված է միայն մեզնից: Ով մկրտված է, ունի ազատություն Քրիստոսով և հնարավորություն ունի Աստծո արքայություն մտնելու: Իսկ այդ ամենը կախված է մեզնից: Դա կախված է մեր որոշումից: Այսինքն՝ մենք չենք կարող ասել՝,,Մենք չարի զոհեր ենք: Նա այնքան ագրեսիվ էր, որ մենք չկարողացանք հավատարիմ մնալ,,: Ոչ, ոչ ոք չի կարող դուռը

Հիսուսը մեզ համար Աստծո արքայություն գնալու հնարավորություն է բացում:

փակել: Եթե այդպես լինի, ապա մենք, որ որոշում ենք կայացրել, չենք կարող այդ դռնով անցնել: Սա Ավետարանի ամենակարևոր դրվագներից մեկն է:

Իսկ եթե հետևում են Հիսուս Քրիստոսի կանչին և մկրտվում են, ազատ են լինում և կարող են երանելի դառնալ – եթե միայն դա ուզեն: Դա յուրաքանչյուրից է կախված: Այնքան մխիթարական է իմանալ, որ այնքան ժամանակ, ինչքան պետք է հավատարիմ մնալ, Աստված մեզ օգնելու է: Սա հավատացյալների ազատությունն է: Իսկ հետո Հիսուսն ասում է՝,, Եթե որևէ մեկը ինձնով ներս է մտնում, նա մտնելու և ելնելու է, և ճաշակելու բան է գտնելու,,: Այսինքն՝ մենք պետք է ներս մտնենք այդ դռնով Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի ճաշակելու բան գտնենք: Եվ ես կարծում եմ, որ Ճապոնիայում ևս այնպես է, ինչպես ամբողջ աշխարհում: ,,Կան բազմաթիվ տեսություններ և ուսմունքներ: Դրանք բոլորը մրցակցության մեջ են Ավետարանի հետ: Սակայն, նորառաքելական եկեղեցու գլխավոր առաքյալի առաջադրանքը՝ չէ այդ ուսմունքները ճիշտ համարել կամ ասել՝ սա լավ է, դա՝ վատ,,: Կան շատ տեսություններ, թե ինչպես կարելի է կյանքում հարուստ և երջանիկ լինել, ինչպես կարող են խելացի և հաջողակ լինել: Իսկ ես ամբողջովին վստահ եմ, որ եթե մենք այս թեմայի շուրջ խոսելու լինեինք, երբեք չէինք կարող տեսաբաններից մեկին առանձնացնել: Յուրաքանչյուրն

Ինչու՞մ է կայանում հարստությունը: Որոշների համար դա փողն է, մյուսների համար՝ ընտանեկան երջանկությունը: Շատերի համար էլ բոլորովին այլ բաներ են: Դրանք տարբերակելը բոլորովին Քրիստոսի խնդիրը չէ և ոչ էլ՝ եկեղեցու: Բայց, եթե խոսքը գնում է մեր երանելիության մասին, ապա կա միայն մեկ ճանապարհ դեպի Աստծո թագավորություն, դա Հիսուս Քրիստոսի դուռն է: Դա նշանակում է հետևել նրա Ավետարանին: Եթե խոսքը մեր անձնական կյանքին է վերաբերում, կարող ենք անել այն, ինչ ուզում ենք: Բայց, եթե մենք ուզում ենք հասնել Աստծո արքայություն, ապա միայն մեկ ճանապարհ կա, որպեսզի ստանանք անհրաժեշտ կերակուրը, այն է՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Ով հավատում է, մտնելու և ելնելու է Հիսուս Քրիստոսի դռնով, և գտնելու է կերակուրը, որն անհրաժեշտ է փրկության համար: Այդ դուռը մեզ համար հնարավորություն է բացում Աստծո արքայություն գնալու: Չնայած բոլոր ջանքերին՝ մենք մեր սեփական ուժով չենք կարող առաքինի դառնալ:

Խնդրում եմ, գնացեք աղոթքի դռնով:

Շրջանային առաքյալ Էդի Իսնուգրոհոն / Հարավարևելյան Ասիա/ խոսում է հանուն Աստծո որոշում կայացնելու մասին

Աստծո արքայություն հասենլու համար պետք է նմանվենք Հիսուս Քրիստոսին: Նա առաջինն է, ով որպես մարդ առաջինը գնաց Աստծո արքայություն: Եվ մեզ համար միակ հնարավորությունը նրա նման դառնալն է: Սակայն, միայնակ մենք չենք կարող դա անել: Մենք խեղճ մեղավորներ ենք և չենք կարող այնպես կատարյալ լինել, ինչպիսին Հիսուս Քրիստոսն էր: Ուրեմն՝ մեր ողջ հույսը դնենք նրա ողորմածության վրա, որը նա մեզ նվիրելու է իր գալստյան ժամանակ, դրանով մենք կունենանք ճիշտ վերաբերմունք: Ուրեմն՝ Աստծո արքայություն գնալու միակ հնարավորությունը, որ Հիսուսը նվիրում է մեզ; ,, ովքեր նրա աջին են,, / Մատթեոս 25,34/; դա իր ողորմածությունն է: Առանց նրա ողորմածության՝ մենք չենք կարող դրան հասնել, քանի որ նա է դուռը:

Մեկ այլ միտք փրկության թեմայի վերաբերյալ: Նա է դուռը, նա է լինելու դատավորը: Իր գալստյան ժամանկ նա է որոշելու, թե ով է գնալու Աստծո արքայություն, ում է նա իր ողորմածությունը տալու: Նա ուսումնասիրելու է մեր որոշումը, պահանջը և վճռականությունը: Նա ուշադրություն չի դարձնելու մեր մեղքերի վրա, մեր պարտքերի վրա: Նա ուշադրություն է դարձնելու մեր սիրո և հավատի վրա: Եվ նա լինելու է այն միակը, ով որոշելու է՝ մեզ տանի իր հետ է, թե՝ ոչ: Մի մտահոգվեք այն բանի համար, թե ինչ են մարդիկ ձեր մասին ասում: Մի մտահոգվեք այն բանի համար, թե մեծամասնությունն ինչ է մտածում: Մեզ համար միևնույնն է: Կարևոր է այն, թե ինչ է մտածում մեր մասին Հիսուսը և ինչ է նա մեզ ասում: Մնացյալը կարևոր չէ: Ոչ մի դեր չի խաղում այն, թե քո մասին ինչ է մտածում քո առաքյալը, քանի որ հոգևորականները ևս մարդիկ են: Նրանք ունեն իրենց անհատական պատկերացումները, մշակութային հենքը: Ինչը որ կարևոր է, դա Հիսուս Քրիստոսն է: Նա է դատավորը: Մի մտահոգվեք, նա գլխավոր առաքյալին ևս չի հարցնելու, թե ով պետք է իր կողմից ընդունվի կամ չընդունվի: Շատերի համար սա միտիթարական

է: Նա ուշադրություն է դարձնում մեր սիրո, մեր կողմնորոշման և փրկության մեր պահանջի վրա: Նա է փրկություն տանող ճանապարհը, ուրիշ՝ ոչ ոք: Երանելի դառնալու համար մենք պետք է անցնենք Հիսուս Քրիստոսի դռան միջով: Մենք պետք է նրան հավատանք: Բայց և մենք ազատ ենք:

Մենք ամեն անգամ նորից պետք է որոշենք, թե արդյոք գնում ենք այդ դռնով: Ոչինչ և ոչ ոք չի կարող մեզ խանգարել Աստծո արքայություն գնալու: Որոշում կայացնողը մենք ենք: Միակ ճանապարհը, որով մենք ստանալու ենք կերակուրը, որի կարիքն ունենք Աստծո արքայություն գնալու համար, Քրիստոսի ուսմունքի միջոցով է, որը նա մեզ տալիս է առաքյալների ծառայությամբ և Սուրբ Հաղորդությամբ, քանի որ Հիսուսն ասում է՝,, Ով ուտում է իմ մարմնից և խմում է իմ արյունից, նա ունենում է հավիտենական կյանք,,: Երանելի դառնալու համար մենք պետք է անցնենք Ավետարանի տեղեկացման և Սուրբ Հաղորդության տոնակատարության դռնով: Մի մտահգվեք, մենք մեր հույսը դնում ենք այն ողորմածության վրա, որը նա մեզ նվիրելու է իր գալստյան ժամանակ: Իսկ մենք չենք կիսում ուրիշների կարծիքը: Այն, ինչը կարևոր է մեզ համար, դա Հիսուս Քրիստոսի կարծիքն է:

Սա այն տեսակետն է, որ Հիսուսը փրկության դուռն է: Ես ցանկանում եմ այլ տեսակետ ևս ներկայացնել: Հիսուսն ուզում է դուռ լինել նաև մեր ամենօրյա կյանքում: Դուք գիտեք, որ երբեմն լինում են իրավիճակներ, որոնք անելանելի են թվում: Մարդը գտնվում է դժվար իրավիճակում և տեսնում է միայն փակուղի: Եվ չի իմանում, թե ինչպես դուրս գա այդ վիճակից: Եկեք այս դեպքում ևս Հիսուսին որպես դուռ օգտագործենք: Ի՞նչ է դա կոնկրետ նշանակում: Երբ մենք փորձության կամ այլ դժվար վիճակում ենք լինում, պետք է գիտակցենք, որ վերջնական և ճշմարիտ լուծումը Քրիստոսի գալուստն է: Աստված ուզում է մեզ երանելի դարձնել: Նա ուզում է մեզ բոլոր ճնշումներից, բոլոր կարիքներից ազատել և իր արքայություն տանել:

Նորմալ է, երբ մենք խնդրում ենք նրա օգնությունը, երբ դժվարությունների մեջ ենք լինում: Բայց, եկեք Հիսուսին որպես փրկության դուռ՝ ավելի ճիշտ դիտարկենք: Նրա օգնությունը կայանում է նրանում, որ նա հոգում է այն բանի համար, որ մենք, չնայած այդ ճնշումներին՝ կարողանանք գնալ Աստծո արքայություն: Սա օգնություն է: Երբ մենք հիվանդ ենք լինում, կամ մեր կինը, ամուսինը, կամ երեխաները, ապա ամբողջովին նորմալ է, որ մենք ասում ենք՝,, Տեր, խնդրում եմ, օգնիր,,: Իսկ սա հույս է: Երբեմն Աստված լսում է այդպիսի աղոթքները, իսկ երբեմն՝ ոչ: Իսկ ազնիվ լինելու համար, ես ևս տեղեկություն չունեմ, թե ինչու է մի դեպքում լսում, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Սակայն, ես իմ փորձից ձեզ ասում եմ, որ նա ամեն անգամ նվիրում է այն օգնությունը, որի կարիքը հոգիներն ունեն, որպեսզի չնայած այդ փորձություններին և կարիքներին՝ հավատարիմ մնան: Դա մենք պետք է գիտակցենք:

Աստծո օգնությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ մեզ օգնի հավատարիմ մնալ: Երբ Հիսուսը երկրի վրա էր, նա էլ էր այնպիսի իրավիճակում հայտնվում, որից դուրս գալը անելանելի էր թվում: Եվ նկատելի է, որ ամեն անգամ նա օգտվում էր նույն դռնից: Նա ամփոփվում էր իր մեջ և աղոթում իր Հորը: Եվ աղոթքի դռան միջով այդպես անցնելը ամեն անգամ օգնում էր նրան: Քանի որ նա աղոթում էր, ստանում էր օգնություն, մխիթարություն և իմաստություն, որոնց կարիքը նա ուներ, որպեսզի շարունակեր առաջ գնալ: Քույրեր և եղբայրներ, երբ մենք գտնվում ենք դժվար իրավիճակում, երբ ոչ մի լուծում, ոչ մի ելք չի երևում, խնդրում եմ, անցեք աղոթքի դռնով: Արժե միշտ այդ դռնով անցնելը: Աղոթելը միշտ օգնում է: Եկեք գնանք Հիսուս Քրիստոսի դռնով, որպեսզի լուծենք մեր խնդիրները: Մենք ուզում ենք հավատարիմ մնալ և նրա պատվիրանները կատարել: Ես գիտեմ, որ դա ես գրեթե ամեն կիրակի քարոզում եմ: Եվ ես երբեք չեմ հոգնում նույնը կրկնելուց: Այսօր աշխարհն այնքան շատ դռներ է առաջարկում, որոնց միջով կարող ենք անցնել, որպեսզի հաղթահարենք դժվարությունները: Մարդկային տեսանկյունով այդ դռները փրկություն են: Կան լուծումներ, որոնք վերացնում են մեր երկրային խնդիրներն ու կարիքները: Դրանով մենք մեր փրկությունը խաղի ենք վերածում: Մենք չենք ուզում անցնել այն դռնով, որով այլևս չենք կարողանա պահպանել Աստծո պատվիրանները: Անկախ նրանից, թե ինչ իրավիճակում ենք գտնվում, եկեք միշտ պահպանենք պատվիրանները: Դա փոքր դուռ է և դժվար ճանապարհ: Սակայն, մեր փրկությունը առաջնայնություն ունի: Քանի որ ուզում ենք վստահ լինել, չենք ուզում գոհանալ մեկ այլ դռնով: Պետք է գիտակցենք, որ դա կարող է շատ արագ և շատ կոնկրետ լինել՝ մի քիչ սուտ, և ամեն ինչ ավելի հարմար կլինի: Եկեք գնանք Աստծո պատվիրանների դռնով:

Հիսուսի համար խաչելությունը ամբողջովին փակուղի էր: Նա չէր հասկանում իր Հոր կամքը: Իսկ նրա համար կար միայն մեկ դուռ, որը բաց մնաց՝ նա վստահում էր իր Հորը: Ես սա ասում եմ իմ խոսքերով՝,, Իմ Աստված, ես քեզ չեմ հասկանում: Ինչու՞ ես դու ինձ լքել: Բայց ես վստահում եմ քեզ: Ես ինձ նվիրում եմ քեզ և ըմբռնում եմ քո կամքը,,

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հոգևորականների շրջանում



: Քույրեր և եղբայրներ, շատ իրավիճակներում սա միակ հնարավորությունն է, որ մենք ունենք, որպեսզի փակուղուց դուրս գանք: Պարզապես ըմբռնենք, որ մենք չենք կարողանում հասկանալ Աստծո գործունեությունը: Եվ միակ ճանապարհը, որը մենք շարունակելու ենք գնալ, այն է՝ Աստծուն վստահել առանց նրան հասկանալու, առանց որևէ հարց տալու: Ես ևս ապրել եմ դա, ուստի գիտեմ, որ հեշտ չէ այդ դռնով գնալը: Սակայն, դա ամբողջովին ամենալավ ճանապարհն է, որպեսզի դուրս գանք դժվար իրավիճակից:

Կա ևս այլ դուռ՝ մերձավորին սիրելու դուռը: Հիսուսը հաճախ էր անցնում այդ դռնով: Հիշենք աշակերտներին, ովքեր նրան միայնակ էին թողել: Հիսուսն անցավ ներման դռնով: Դա էր խնդրի լուծումը: Մենք էլ ենք ուզում ներման դռնով անցնել: Երբ մենք որևէ մեկին ներում ենք, կարող ենք վստահ լինել, որ մենք ճիշտ որոշում ենք կայացրել: Ներելով մենք երբեք սխալ բան չենք անում: Գնացեք մերձավորին սիրելու դռնով և արեք բարին՝ չարը չարով պատասխանելու փոխարեն: Շատ մարդկանց համար նորմալ է վրեժ լուծելը, երբ որևէ մեկը նրանց վիրավորում կամ ցավ է պատճառում: Վրեժխնդրությունը հեշտ ճանապարհ է: Եկեք այլ դռնով անցնենք- այն փոքր է, սակայն, ամենալավն է, ու չարին բարիով պատասխանենք: Այդ դուռը մեզ տանում է Աստծո արքայություն և դուրս է բերում դժվար իրավիճակներից:

Հիսուսի դուռը մերձավորին սիրելու դուռն է: Իր սեփական կյանքի վերջում նա գնաց այդ դռնով: Նա ուզում էր վերադառնալ իր Հոր մոտ: Սակայն, նա չէր ուզում միայնակ գնալ: Նա չմոռացավ ոչ մեզ, ոչ էլ՝ մերձավորին: Նա մտածում էր անգամ հանցագործի մասին, ով իր հետ խաչի վրա էր: Նա մտահոգվում էր իր յուրայինների համար, Մարիայի համար, Հովհաննեսի համար: Եվ նա աղոթում էր նրանց համար, ովքեր իրեն խաչել էին: Նա մահացավ մեզ համար: Նա չէր ուզում միայնակ գնալ փրկության դռնով: Նա ուզում էր, որ մենք իր հետ գնանք: Եկեք նաև այդ ճանապարհով գնանք, այդ դռնով անցնենք: Մենք ուզում ենք Աստծո օգնությունը ոչ միայն մեզ համար խնդրել: Եկեք եսասեր չլինենք, այլ, ինչ էլ որ մեր կյանքում պատահի, միշտ հոգանք նաև մերձավորի համար: Պետք է գիտակցենք՝ մենք չենք ուզում միայնակ փրկվել: Մենք ուզում ենք, որ մյուսներն էլ մեզ հետ երանելի դառնան: Հիսուսը մեզ փրկել է, դրա համար էլ ուզում ենք այդ դռնով անցնել: Եվ ամեն անգամ, երբ մենք անցնում ենք այդ դռնով, օրհնվում ենք:

Հիմնական մտքեր

Հիսուս Քրիստոսը մեր փրկության դուռն է: Նա մեզ ազատում է չարից, կերակրում է մեզ և նվիրում իր ողորմածությունը: Փորձության ժամանակ հետևենք Հիսուսի օրինակին:

Առաքյալ Ռենե Ֆոլլմաննի այցը Հայաստան

Սպասավորների և ուսուցչական կազմի համար անկացված սեմինարից հետո Վանաձորում

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Ժամերգության ավարտին Վանաձորի համայնքից այս տղան նվագում է հայկական դուդուկ

2024-ի մարտ ամսին Հայաստանի Նորառաքելական եկեղեցու նոր առաքյալ Ռենե Ֆոլլմաննը կատարեց հոգու խնամքի իր առաջին այցը Հայաստան: Իր նախորդներ Ալֆրեդ Կուսերոյից, Բերնդ Քլիփփերտից, Ռայներ Շթորքից, Վիլհելմ Հոյերից, Յենս Լինդեմաննից և Վոլֆգանգ Շուգից հետո նա Հայաստանի նորառաքելական եկեղեցու յոթերորդ առաքյալն է:

2024-ի մարտի 14-ից մինչև 21-ը նա եղավ Հայաստանում և տոնեց շատ ժամերգություններ: Քանի որ սա նրա առաջին այցն էր Հայաստան, նա ցանկանում էր լինել բոլոր համայնքերում, որպեսզի տեսնի եկեղեցական շինություններն ու ծանոթանա քույր-եղբայրների հետ: Նա եղավ նաև Կաճաճկուտ գյուղում, որը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1 500 մ բարձր մի սարի վրա, որպեսզի այնտեղ տեսնի եկեղեցու շինությունը:

Անցած տարի առաքյալ Ռենե Ֆոլլմաննը սպասավորների համար սեմինարի շրջանակում Վրաստանում ծանոթացել էր հայ սպասավորներին: Նա այնտեղ նաև Վանաձորի համայնքից երեք քույրերի ձեռնադրել էր սարկավագուհիներ :

Իր այցի առաջին օրը առաքյալ Ֆոլլմաննը Վանաձորում սեմինար անցկացրեց սպասավորների և ուսուցչական կազմի համար: Սեմինարի ընթացքում շատ հարցեր քննարկվեցին: Սպասավորներն ամենից առաջ խոսեցին ժամերգության ընթացքում հավատացյալների ճիշտ պահվածքի մասին: Նրանք եկան այն եզրահանգման, որ այս ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան: Ժամերգության ընթացքում միացված հեռախոսների հարցը արդիական է բոլոր համայնքներում: Այդ խնդիրը անպայման պետք է լուծվի, և դրա համար պետք է ամեն ինչ անեն: Մի քանիսն առաջարկեցին այլընտրանքներ, օրինակ, մեծահասակների հեռախոսները ժամերգությունից առաջ անջատել կամ ձայնը իջեցնել տալ: Ներկաները խոսեցին նաև ժամերգության ժամանակ երաժշտության կարևոր դերի մասին: Ցավոք, Օձունի համայնքում երաժիշտ չկա: Համայնքի սարկավագը խոստացավ որևէ լուծում գտնել:

Խոսվեց նաև եկեղեցում կանանց մեծ դերի մասին: Մասնակիցները ճիշտ էին համարում, որ հավատացյալ քույրերը հայանքներում կարող են ծառայել որպես սարկավագուհիներ: Նրանք չէին թերագնահատում տղամարդ սպասավորների դերը, սակայն այն կարծիքին էին, որ կանայք էլ կարող են սակավագի պաշտոնից բխող առաջադրանքը արժանապատիվ կատարել: Վանաձորում ժամերգության ժամանակ առաքյալի

Օձունում անցկացվող ժամերգության ժամանակ

Առաքյալ Ֆոլլմանը ժամերգություն է տոնում Երևանի համայնքում

առաջարկով զոհասեղանի մոտ ծառայեց համայնքի սարկավագուհիներից մեկը, ում խոսքը դուր եկավ ինչպես առաքյալին, այնպես էլ քույր-եղբայրներին:

Սպասավորներն ու սպասավորուհիները շեշտեցին, որ սպասավորների նման սեմինարները ուսուցողական են: Առաքյալ Ռենե Ֆոլլմանը ևս հաստատեց դա և ասաց, որ ապտրաստ է հնարավորության սահմաններում հաճախակի կազմակերպել նման քննարկումներ:

Առաքյալ Ռենե Ֆոլլմանը ժամերգություններ տոնեց Ալավերդիում, Օձունում, Վանաձորում, Ստեփանավանում, Գյումրիում, Երևանում: Բոլոր համայնքների նորառաքելական քրիստոնյաները մեծ ուշադրությամբ էին լսում առաքյալի հետաքրքիր և բովանդակալից քարոզները: Այդ քարոզների շնորհիվ նրանք նորովի ըմբռնեցին Սուրբ Հաղորդության արժանապատիվ տոնման իմաստը: Դա շատ կարևոր է, քանի որ նրանք տոնում են միասնությունը Հիսուս Քրիստոսի և միմյանց հետ:

Առաքյալը Գյումրիում համայնքի երկարամյա սարկավագ Վարդան Խաչատրյանին առողջական խնդիրների պատճառով հանգստի կարգավիճակի ուղարկեց : Առաքյալ Ֆոլլմանը շնորհակալություն հայտնեց նրան իր հավատարիմ ծառայության համար, ցանկացավ առողջացում և ասաց, որ նա իր խորհուրդներով կշարունակի օգտակար լինել համայնքին: Միևնույն ժամանակ նա երկու սարկավագուհիներ ձեռնադրեց Գյումրիի համայնքի համար: Երկու քույրերից մեկը կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհին է, մյուս քույրը գործող սարկավագի կինն է: Հավատացյալ քույր-եղբայրները շատ ուրախացան այս առիթով, քանի որ այս երկու քույրերին էլ լավ են ճանաչում: Նրանք երկար տարիներ համայնքի հավատարիմ անդամներ են և սիրված են համայնքի կողմից:

Առաքյալ Ռենե Ֆոլլմանը լավ տպավորություններով վերադարձավ Գերմանիա:

Գյումրիի համայնքում տոնվող Ժամերգության ժամանակ գրեթե բոլոր տեղերն զբաղված են

ՄԵՍԻԱՆ և ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆՐԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԵՍԱՅԻ 11-Ի

Հիսուսի ծննդից 700 տարի առաջ Երուսաղեմում ապրում էր մի մարգարե: Նրա անունը Եսայի էր: Նրա միջոցով Աստված տեղեկացրեց Մեսիայի գալստյան մասին: Եսային նկարագրում էր նաև, թե ինչպես է լինելու, երբ խաղաղության թագավորը իր թագավորությունը ստեղծի՝

Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից: Նրա վրա պիտի իջնի Աստծու հոգին, իմաստության և հանճարի հոգին, խորհրդի ու զորության հոգին, գիտության և աստվածապաշտության հոգին:

Նա գոհանալու է Տիրոջ բերքից: Ոչ ըստ կարծիքի պիտի դատի նա,և ոչ էլ ըստ խոսքերի՝ հանդիմանի: Նա տնանկի իրավունքը պիտի պաշտպանի և արդարությամբ, իր բերանի խոսքով հարվածի երկրին և իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին: Արդարությամբ պիտի գոտևորի իր մեջքը և

ճշմարտությամբ կապի
իր կողերը: Գայլն ու գառը
միասին պիտի ուտեն,
ընձառյուծը ուլի հետ պիտի
մակաղի, հորթը, ցուլը ու
առյուծը միասին պիտի սնվեն,
և մատաղատի մանուկը պիտի
հովվի նրանց:
Եզն ու արջը միասին պիտի
ուտեն, նրանց ձագերը խառը
պիտի շրջեն, և առյուծը,
ինչպես եզը, հարդ պիտի
ուտի:
Մատաղատի մանուկն իր
ձեռքը պիտի մտցնի իժերի
բունը և իժերի ձագերի բունը:
Ու նրանք ոչ ոքի չպիտի
կարողանան վնասել և խայթել
իմ սուրբ լեռան վրա, քանզի
ամբողջ երկիրը լցվելու է
Տիրոջ գիտությամբ, նման առատ
ջրերին, որոնք ծածկում են
ծովերը: Դա տեղի է ունենալու
այն ժամանակ, որ Հեսսեի
արմատից ընձյուղ բուսնի
որպես նշան ժողովուրդների
համար: Նրան պետք է հարցնեն
ժողովուրդները, և այն վայրը,
որտեղ նա կբնակվի,
փառահեղ կլինի:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 12 2023, ձևավորումը՝ Միրելա Ֆորսուանայի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՈՒՐԻԱՆԱՅԻՆ Ի ՌՈԱԴՈՒՄ/ ՀՆԴԿԱՍՏԱՆ/

Իմ անունը Լոուրիանա է, բայց բոլորն ինձ անվանում են Ռուչի: Ես 13 տարեկան եմ և ապրում եմ Աբու Ռոադում՝ Հնդկաստանի Ռաջաշտան նահանգի մի փոքր քաղաքում:

Հնդկաստանը աշխարհի ամենամեծ երկրներից մեկն է, այստեղ ապրում է 1,4 միլիարդ մարդ: Հնդիկների մեծ մասն ապրում է գյուղերում: 100 հնդիկից 67-ն ապրում է գյուղերում, իսկ 33-ը՝ քաղաքներում-ինչպես իմ ընտանիքը:

Իմ հայրիկի անունը Բհասկար է, նա մեր համայնքում ծառայում է որպես հովիվ: Իմ մայր Ագնեշը ուսուցչուհի է և շատ խստորեն է ստուգում մեր տնային առաջադրանքները: Նա նաև մեր կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհին է: Ես եմ և իմ ավագ եղբայր Ռիչարդ Փաուլը: Նա հաճույքով խաղում է կրիկետ, որը գնդակով խաղ է: Ես կրիկետը չեմ սիրում, բայց եղբորս շատ եմ սիրում:

Մեր համայնքը հավաքվում է Հնդկաստանի ամենահին նորառաքելական եկեղեցիներից մեկում: Այստեղ են կնքվել առաջին հավատացյալները: Եկեղեցում ինձ համար ամենլավը կիրակնօրյա դպրոցն է, որտեղ մենք Աստծո մասին ենք սովորում: Մեր խմբում կա ութ երեխա և երկու ուսուցիչ:

Ես հաճախում եմ մասնավոր դպրոց, որը շատ մոտ է մեր տանը։ Ես ընկերացել եմ շատ երեխաների հետ, բայց, իսկապես, քչերն են լավ ընկերներ։ Ես սիրում եմ անվավոր չմուշկներով սահելը, վերջերս ես անվավոր չմուշկների մրցույթում մեր դպրոցում զբաղեցի երկրորդ տեղը։

Շատ հնդիկներ միս քիչ են ուտում կամ բոլորովին չեն ուտում։ Հնդկական ուտեստները համեմված են շատ համեմունքներով, երբեմն դրանք շատ կծու են լինում։ Մենք վարժվել ենք դրան և սիրում ենք դա։ Ես սիրում եմ բանջարեղեն, ամենաշատը՝ բամիա։

Հայրս աշխատում է ֆաբրիկայում, բայց շաբաթ օրերին ազատ է լինում։ Այդ օրերի համար ես շատ եմ ուրախանում, քանի որ մենք էքսկուրսիաներ ենք անում։ Ամենաշատը սիրում ենք Շանտիքունջ զբոսայգին, քանի որ այն շատ մեծ ու կանաչ է, և կան խաղալու շատ հնարավորություններ։

Աղբյուրը՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 12 2023, Լուսանկարները՝ մասնավոր, Դմիտրի Ռուդենկո Roop Dey/stock.adobe

Հնավերումի՝ rudall30/stock.adobe

Ճշմարիտ հավատն ապագա ունի

,, Իսկ երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞,, /Ղուկաս 18,8/: Իհարկե, Հիսուսը չէր վախենա, որ ոչ ոք չի լինի, ով իրեն հավատա, երբ նորից գա: Նա լիակատար վստահում էր Աստծուն և գիտեր, որ ապագան համահունչ կլինի փրկության պլանին: Այս հարցի հետ կապված Հիսուսն առաջնային պլան է բերում այն, որ նա իր գալստյան ժամանակ մեծ նշանակություն է տալու հավատին: Որպես առաջնեկ երկնային արքայություն մտնելու իրավունքի համար բավարար չէ միայն ջրով և հոգով վերստին ծնվելը, այլ պետք է լի լինեն ճշմարիտ հավատով:

Հավատը խոսքի հանդեպ

Փրկվելու համար մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդին եկավ երկիր, որպեզի մեզ համար հավիտենական կյանք բերի: Քրիստոսի հանդեպ հավատը բովանդակում է հավատը հարության հանդեպ, Աստծո հետ հավիտենական միասնության և նոր արարչագործության հանդեպ: Առանց էսխատալոգիական սահմանման՝ քրիստոնեական հավատը կորցնում է իր գոյության արդարացիությունը: Ցավոք, քրիստոնյաների շրջանում էսխատալոգիական հույսը դեռ ետին պլան է մղվում: Մի քանիսի համար Հիսուս Քրիստոսը առաջին հերթին նա է, ով կարող է լուծել իրենց խնդիրները: Շատերի համար նա էթիկական չափանիշ է, իսկ նրա ուսմունքը մղում է բարին գործելուն:

Աստծո հանդեպ հավատը կայանում է նրանում, որ հավատ ունենան նրա խոսքի հանդեպ: Ադամն ու Եվան ընկնում են մեղքի մեջ, քանի որ չհավատացին Աստծո խոսքին: Աբրահամն օրհնվում է, քանի որ նա հավատում էր առանց տեսնելու: Իսկ որովհետև Զաքարիան, Հովհաննես Մկրտչի հայրը, և Թովմասն առանց տեսնելու չէին հավատում, ապա Զաքարիան հանդիմանության ենթարկվեց հրեշտակի, իսկ Թովմասը՝ Հիսուսի կողմից : Հավատալը նշանակում է նաև ամրագրել աստվածային ճշմարտությունը՝ առանց այն բանականորեն ընդունել կարողանալու: Աստված մեզ չի խնդրում մարդկային բոլոր իմացություններից հրաժարվել: Սակայն, նա մեզ առաջարկում է գնալ հավատի ճանապարհով, որպեսզի մուտք ունենանք դեպի ճշմարտություններ, որոնք վեր են մարդկային պատկերացումների հնարավորություններից:

Հավատը գալստյան հանդեպ

Որպեսզի Քրիստոսի գալստյան ժամանակ նրա կողմից ընդունվենք, նախ պետք է հավատանք նրա գալստյանը: Ցավոք, այս հավատը բոլորի մոտ չէ, որ առկա է: Քրիստոնյաների մի նշանակալի մաս Քրիստոսի գալուստը ընկալում է ոչ որպես իրական իրադարձություն, ոչ որպես աստվածային միջամտություն պատմությանը, այլ որպես հոգևոր պրոցես, որը կատարվում է յուրաքանչյուր հավատացյալի մոտ: Այս տեսակետին հետևողների պատկերացումը, որ մարդիկ, ովքեր ապրում են երկրի վրա, հանկարծ երկինք են համբառնալու, ուտոպիական է: Մեր կայացրած որոշումն այս ըմբռնման դեմ: Նա, ով հեղինակն է Աստծո Որդու մարդացման, Հիսուս Քրիստոսի հարության և համբարձման, կարող է նաև մեռյալների հարությունը, ողջերի վերափոխումը և նրանց հափշտակությունն իրականացնել: Որպեսզի Քրիստոսի գալստյան հանդեպ հավատը ճշմարիտ լինի, այն պետք է հիմված լինի միայն նրա խոսքի վրա, ոչ թե՝ նշանների: Հին կատակարանի մարգարեները նախապես մանրամասն խոսում էին Փրկչի ծննդի ու գործունեության մասին: Այնուամենայնիվ, մարգարեների ժամանակաշրջանի այդ նկարագրությունները հավատ չարթնացրին հրեաների մոտ: Դրան հակառակ, նրանք, ովքեր հավատում էին Հիսուսի խոսքին, հասկանում էին, որ այն ամենը, ինչ մարգարեները նախապես ասել էին, կատարվել է: Աստվածաշունչը շատ վկայություններ է տալիս Տիրոջ գալստյան մասին:

Բոլոր դեպքերում անմտություն կլիներ այդ կանխատեսումների հիման վրա որոշել, թե երբ է տեղի ունենալու Քրիստոսի գալուստը կամ նկարագրել, թե ինչպես պետք է այն տեղի ունենա: Այն, ինչը կարևոր է այսօր, խոստումին հավատալն է: Երբ նա երևա, առաջնեկները կարող են ասել՝ ,, Իսկապես, ամեն ինչ այնպես տեղի ունեցավ, ինչպես Աստված մեզ ասել էր,,:

Այս տեսանկյունով մենք պետք է հասկանանք նաև այն դժվարությունները, որոնց այսօր առճակատվում ենք: Այս առումով Պողոսն ասում էր՝ ,, Եվ այս բոլորը իբրև օրինակ պատահեց նրանց հետ, բայց որպես խրատ գրվեց մեզ համար, մեզ, որոնց համար հասել է հավիտյանների վախճանը: Այսպես ուրեմն՝ ով կարծում է, թե կանգնած է հաստատ, թող զգույշ լինի, գուցե թե ընկնի,, / Կորնթացիներին Ա 10, 11,12/: Այս փորձությունները չեն հեռացնում Տիրոջ գալուստը, այլ մեզ նախապատրաստում են դրա համար: Դրանք պետք է մեզ համար հնարավոր դարձնեն մեր հավատը չափելը:

Հավատալ փորձությանը

Չարը փորձում է մեզ Աստծուց բաժանել, խանգարել Աստծո խոսքի հանդեպ մեր վստահությունը: Այդպես նա վարվեց Ադամի և Եվայի հետ դրախտում, Հիսուսի հետ՝ անապատում: Այդպես նա դառնում է նաև դեպի մեզ, հատկապես, երբ մենք դժվարությունների մեջ ենք լինում, որպեսզի կասկած առաջացնի Աստծո խոսքի հանդեպ:

Աստված թույլ է տալիս նման փորձություններ, քանի որ դրանք կարող են օգնել մեր փրկությանը: Աստված ամենագետ է – նա չպետք է մեզ փորձի, որպեսզի մեր հավատը իմանա կամ ընտրի նրանց, ովքեր փրկվելու են: Աստծու կողմից թույլ տրված փորձությունները մեզ համար հնարավոր են դարձնում մեր հավատի ամրությունը ստուգելը, մեր սահմանները գիտակցելը և անհրաժեշտ ճշգրտումներ անելը:

Այս ընթացքը կա փրկության ամբողջ պատմության մեջ: Հին կտակարանում Աստված անապատում փորձում էր Իսրայեի ժողովրդին / Մովսես 5 , 8, 2-5/, որպեսզի ուժեղացնի նրանց հավատը ընդունած խոսքի հանդեպ: Նա թույլ է տալիս ժողովրդին տառապել սովից, որպեսզի ուսուցանի, որ միայն հացով չէ, որ մարդը կարող է ապրել, այլ՝ Աստծո խոսքով: Նա դադարեցնում է ջրի հոսքը, որպեսզի ուսուցանի իր խոսքին վստահելը: Նոր կտակարանն ասում է, որ վաղ շրջանի քրիստոնյաները փորձության էին ենթարկվում, որպեսզի հավատն ուժեղանա / Պետրոս 1-ի, 1, 6-9/:

Ամենամեծ փրձություններից մեկը, որը Աստված տալիս է մարդկանց, համբերությունն է: Աբրահամը ստիպված էր տասնամյակներով սպասել, մինչ իրականա իրեն որդի նվիրելու Աստծո կողմից տրված խոստումը: Դարեր են անցնում, մինչ Աստված Փրկչին կուղարկի մարդկանց, որի մասին հայտնել էր նրանց: Տերը մեզ խոստացել է շուտով նորից գալ, բայց նա դեռ չի գալիս: Արդյո՞ք մեր վստահությունն այդ խոստման հանդեպ հաստատուն է: Ճշմարիտ հավատը դիմադրում է ժամանակի ավերիչ ուժին ...

Հավատ առանց ապացույցների

Աբրահամի նման մենք էլ պետք է Աստծո խոստումին և նրա բարի կամքին վստահենք՝ի հակառակ ձևականության: Մեզ սովորեցրել են,որ Սուրբ Հաղորդության ընդունումը մեր փրկության համար անխուսափելի է: Բայց, Աստված թույլ է տալիս, որ մենք երկար ժամանակ դրանից մեզ ետ պահենք: Ինչպե՞ս կարելի է այս պարադոքը բացատրել: Մենք դա չգիտենք: Իսկ, արդյո՞ք դա պատճառ է կհանդիսանա ընդունած ուսմունքի հանդեպ այլևս վստահություն չունենալու համար: Ճշմարիտ հավատը չի սասանվում անպատասխան հարցերի պատճառով:

Շնորհիվ Աստծո խոսքի հանդեպ իր բացարձակ վստահության, Հիսուսը կարողացավ անապատում փորձությունները հաղթահարել: Նա իր յուրայիններից սպասում է նույն վստահությունը նրա խոսքի հանդեպ: Նա քննադատում է նրանց պահվածքը, ովքեր իրենից նշաններ են խնդրում, որպեսզի իրեն հավատան / Մարկոս 8, 11,12/; Հովհաննես 4,48/: Հեշտ է հավատալ առաքյանելի ծառայությանը, եթե կնքված հավատացյալների թիվն

անընդհատ աճում է: Բայց, ինչ էլինում առաքյալների ծառայության հանդեպ այն վստահության հետ, երբ գնալով ավելի քիչ հավատացյալներ են հաճախում մեր եկեղեցիներ: Ճշմարիտ հավատը կարիք չունի տեսանելի նշանների, այն պարզապես հիմվում է Հիսուսի խոսքի վրա: Իսկ Հիսուսը խոստացել է մինչև վերջ լինել իր առաքյալների կողքին:

Հավատն ամբողջովին անձնական է

Հավատը հատուկ անձնական հարաբերություն է ստեղծում հավատացյալի և Քրիստոսի միջև: Քրիստոսն ապրում է նրա մեջ, ով հավատով ապրում է իր մեջ / Գաղատացիներին 2,20; Եփեսաց. 3,17/: Մեր կապվածությունը Հիսուսի հետ որոշիչ է մեր փրկության համար: Մենք գնահատում ենք հանդիպումները մյուս քույր-եղբայրների հետ, մենք վայելում ենք միջոցառումները, որոնք ձեռնարկում ենք նրանց հետ, հաճույքով մասնակցում ենք մեծ միջոցառումներին, որոնք կազմակերպվում են եկեղեցու շրջանակում: Բոլոր այս բաները մեզ կապում են եկեղեցու և միմյանց հետ: Սակայն, այն, ինչը փրկում է մեզ, դա մեր հարաբերությունն է Քրիստոսի հետ: Երբեմն Աստված մեզ փորձում է, որպեսզի մենք կարողանանք ամրագրել, թե արդյո՞ք Քրիստոսի հետ է, որ մենք կապված ենք: Նա կարող է, օրինակ, այնպես անել, որ մեզ համար այլևս հնարավոր չլինի հավաքվելը, միջոցառումների մասնակցելը, մեծ միջոցառումներ կազմակերպելը կամ ժամերգություններին մասնակցելը: Երբեմն նա թույլ է տալիս, որ մենք հիասթափվենք եկեղեցու անդամներից: Նման պարագայում մենք կարող ենք ստուգել մեր անձնական հարաբերության ամրությունը, որը մեզ կապում է Քրիստոսի հետ:

Մեկ անգամ ևս, Աստված մեզ չի փորձում, որպեսզի մեզ ցածրացնի կամ հնազանդեցնի: Նա ցանկանում է, որ մենք հասնենք մեր հավատի ճիշտ դատմանը և կարողանանք արձագանքել, քանի դեռ ուշ չէ: Ճիշտ արձագանքը կայանում է նրանում, որ հնազանդ լինենք իրեն նրանով, որ ասենք՝ ,, Ես հավատում եմ, օգնիր ինձ՝ անհավատիս,, / Մարկոս 9,24/: Աստված այս խնդրանքին միշտ բարությամբ կարձագանքի:

Մենք կարող ենք նաև մեր տխրության պահին ճանաչել Աստծո կողմից թույլ տրված փորձությունը: Դրանք ևս հնարավորություն են տալիս մեզ՝ ստուգելու մեր հավատի ամրությունը: Ստուգենք մեզ՝ առանց արդարացնելու և ողջախոհ խնդրենք Աստծուն՝ ուժեղացնելու մեր հավատը: Նա դա կանի: Քանզի Պողոս առաքյալը գրում էր. ,, Ձեզ վրա ոչ մի փորձություն չի եկել, բացի մարդկանցից եկածից: Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել, այլ՝ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել ,, / Կորնթ. Ա 10, 13/:

Խմբագրական
Հրատարակիչ՝՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Տեղեկատու

07.07.2024	Կիև կամ Լվով (Ուկրաինա)
14.07.2024	Լուբումբաշի (Կոնգոյի ԴՀ)
19.07.2024	Երևան (Հայաստան)
21.07.2024	Թբիլիսի (Վրաստան)
28.07.2024	Մեմմինգեն (Գերմանիա)
16.08.2024	Մվանզա (Տանզանիա)
18.08.2024	Դար էս Սալաամ (Տանզանիա)
14.09.2024	Կինշասա(Կոնգոյի ԴՀ)
15.09.2024	Կինշասա(Կոնգայի ԴՀ)
22.09.2024	Օսթերմյունդիգեն (Շվեյցարիա)
27.09.2024	Սանտա Կրուս դե լա Սիեռա (Բոլիվիա)
29.09.2024	Սան Պաուլո (Բրազիլիա)

New Apostolic Church
International